2695

245
6-16
1900

245
Շ-16

«Հոր-Քարտ»-ից

Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ

ԵՒ

ՑԱՒԵԼՈՒԱԾ

Յարմարեցրած Նորուանների համար

Կազմեց Շ.

180
Ն3-Շ

ԲԲ 2001

Աֆրոլյաֆ
Տպարան Խ. Ասմարեանցի.
1900

2010

Дозволено цензурою. Тифлисъ, 30-го Іюня 1900 г.

280
953-Ճ

Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ.

(Դպրոցների Բաժին)

Ա.

Յարմարեցրած Նորումների Համար

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A. Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
Ա.Խ.-29

Տպարան Խ. Ամարեանցի.
1900

11601

Ըստ բարձու հրամանի Նորին Ս. Օծութեան

Վեհափառ Հայրապետի:

Քահանայի պքեպտա-որբեցու ծոմաձայն:

1. Խորհուրդ խորին անհաս անսկիզբն,
Որ զարդարեցեր զվերին պետութիւնդ
Ի յառագաստ անմատոյց լուսոյն
Գերապանծ փառօք զդասս հրեղինաց:

2. Անճառահրաշ զօրութեամբ
Ստեղծեր զԱդամ պատկեր տիրական
Եւ նազելի փառօք զգեստաւորեցեր
Ի դրախտն ադենի տեղի բերկրանաց:

3. Զարշարանօք քո սուրբ Միածնին
Նորոգեցան արարածք ամենայն
Եւ վերստին մարդն անմահացաւ
Զարդարեալ ի զգեստ անկողոպտելի:

4. Անձրևածին բաժակ հրահոսան,
Որ հեղեր յառաքեալսն ի սուրբ վերնատանն,
Հե՛ղ և ի մեզ հոգիդ սուրբ Աստուած
Ընդ պատմուճանի քո զիմաստութիւն:

5. Ցան քում վայել է սրբութիւն,
Որ զգեցար զվայելչութիւն.
Սրբութիւն փառաց ընդ մեջ քո ածեալ,
Պատեա զմէջս մեր ճշմարտութեամբ:

6. Որ զարարչագործ բազուկս քո
Տարածեցեր ընդդէմ աստեղաց,
Հաստատեա զբազուկս մեր կարողութեամբ՝
Համբարձմամբ ձեռաց առ քեզ միջնորդիլ։

7. Իւսմամբ թագ ի գլուխ պատեսցես
Զմիտս և զգայարանս,
Խաչանիշ ուրարմամբ ըստ Ահարովնի՝
Ծաղկեալ ոսկեթել ի զարդ խորանի։

8. Բամից բոլորից տիրապէս Աստուած,
Պետական նափորտապատ սիրովդ
Զմեզ զգեստաւորեցեր՝
Քում սուրբ խորհրդոյդ լինել սպասաւոր։

9. Թագաւոր երկնաւոր,
Զեկեղեցի քո անշարժ պահեա,
Եւ զերկրաբպագուս անուանդ քում
Պահեա ի խաղաղութեան։

Մեղեդիներ

I. *Նախ քան մեղեդին.*

ա) Ընտրեալդ Աստուծոյ,
Ով երջանիկ սուրբ Հայրապետ։

բ) Յորժամ մտցես ի սուրբ խորան,
Անդ յիշեսցես զմեր ննջեցեալսն։
Յորժամ առնես զպատարագս,
Ցիշեա և զիս զբազմամեղս։

II. *Աւետման, ծննդեան, Աստուածածնի.*

Աչքն ծով ի ծով ծիծաղախիտ
Ծաւալանայր յառաւօտուն՝
Երկու փայլակնաձև արեգական նման։

Յարութեան, Եկեղեցւոյ, կիւրակէների.

Այսօր մեռեալք ընդ կենդանեացս
Ձայնէին՝ աւետիս, յարեաւ Քրիստոս։

Այսօր հարսքն լուսոյ
Զգեցեալ ծիրանի՝ արեամբ գեղեցիկ։

Կիւրակէների եւ ծաղկազարդի.

Ի կոյս վիմէն յարեաւ այսօր
Եւ զգերեալսն ի գերողէն ազատեաց։

Յիսուս Քրիստոս եմուտ այսօր
Ի սուրբ քաղաքն Երուսաղէմ
Ովսաննա երգով։

Սրբոց տօներին.

Յայս յարկ նուիրանաց
Ուխտի տեառն տաճարիս
Ժողովեալքս աստանօր ի խորհուրդ պաշտման
Պաղատանաց առաջիկայ սուրբ պատարագիս,
Խնկօք անուշիւք խումբ առեալ պարեմք
Ի վերնայարկ սրահս խորանիս.
Ուղղութեամբ ընկալ զաղօթս մեր,
Որպէս բուրումն անուշահոտ
Խնկոց, ստաշխից և կինամոնաց։
Եւ զմատուցողս պահեա սրբութեամբ
Միշտ և հանապազ քեզ սպասաւորել։

Բարեխօսութեամբ մօր քո և կուսի
Ընկալ զաղաչանս քոց պաշտօնէից։
Որ զերագոյն քան զերկինս պայծառացուցեր
Սուրբ զեկեղեցի արեամբ քով Քրիստոս։
Եւ ըստ երկնայնոցն կարգեցեր ի սմա
Զդասս առաքելոց և մարգարէից,
սուրբ վարդապետաց։

Այսօր ժողովեալ դասք քահանայից,
Սարկաւագաց, դպրաց և կղերիկոսաց։
Խունկ մատուցանեմք առաջի քո Տէր,
Յօրինակ ըստ հնումն Զաքարիայ։
Ընկալ առ ի մէնջ զխնկանուէր մաղթանս,
Որպէս զպատարագն Աբէլի, զՆոյի և զԱբրահամու։
Բարեխօսութեամբ վերին քո զօրաց
Միշտ անշարժ պահեա զԱթոռ Հայկազնեայց։

Սարկաւագ.-Օրհնեա տէր։
Քահանայ.-Օրհնեալ Թագաւորութիւնն . . .

(Ժամամուտ)

Սրկ.-Եւ ևս խաղաղ... օրհնեա տէր։
Քհ.-Օրհնութիւն... խաղաղութիւն ամենեցուն։

Եւ ընդ հոգւոյդ քում։

Սրկ.-Աստուծոյ երկրը . . .

Առաջի քո տէր։

Քհ.-Տէր Աստուած մեր. . .

(Ճաշու շարակն)

Սրկ.-Օրհնեա տէր։
Քհ.-Զի քո է . . .
Սրկ.-Պատսխանեմ։

Սուրբ Աստուած, սուրբ և հզօր,
սուրբ և անմահ,
Որ յարեար ի մեռելոց,
ողորմեա մեզ։ (3 անգամ)

Որ խաչեցար վասըն մեր (Խաչի ե- ուրբոյ ամենրի)
Որ յայտնեցար վասըն մեր (Յայտնա-ՐԵՆ)
Որ ծընար և յայտնեցար վասըն մեր (Ծնունդեան)
Որ եկիր և գալոցդ ես (Ծաղկազարդի)

Որ համբարձար փառօք առ Հայր յերկինս (Համբարձման)
Որ եկիր և հանգեար յառաքեալսն (Հոգեգալստեան)
Որ յայտնեցար ի Թափոր լերին (Վարդավառի)
Որ եկիր ի փոխումն մօր քո և կուսի (Աստի վերափ.)

Սրկ.-Եւ ևս խաղաղութ. . .

Տէր ողորմեա։ (6 անգամ)

Սրկ.-Վասն հոգոյն հանգուցեալ . . .

Ցիշեա տէր և ողորմեա,
Տէր ողորմեա,
Քեզ տեառնդդ յանձն եղիցուք,
Տէր ողորմեա, տէր ողորմեա,
տէր ողորմեա։

(Ճաշու գիրք)

Քհ.-Խաղաղութիւն . . .

Եւ ընդ հոգւոյդ քում։

Սրկ.-Երկիւղածութեամբ . . .
Քհ. կամ Սրկ.-Սրբոյ աւետարանի . . .

Փառք քեզ տէր Աստուած մեր։

Սրկ.-Պատսխանեմ։

Ասէ Աստուած։

(Ճաշու աւէտարան. . .)

Փառք քեզ տէր, Աստուած մեր:

(Հաւատամք. . .)

Սրկ.-Եւ ես խաղաղութ.

Տէ՛ր ողորմեա:

Սրկ.-Եւ ես հաւատով . . .

Կեցո տէր:

Սրկ.-Զամն սուրբ . . .

Շնորհեա տէր: (4 անգամ)

Սրկ.-Եւ ես միաբան . . .

Տէր ողորմեա, քեզ տեսանողդ յանձն եղիցուք,
Տէր ողորմեա, տէր ողորմեա,
տէր ողորմեա:

Սրկ.-Օրհնեա տէր:
Քհ.-Որպէս զի . . . խաղաղութ . . .

Եւ ընդ հոգւոյդ քում:

Սրկ.-Աստուծոյ երկիր . . .

Առաջի քո տէր:

Քհ.-Խաղաղութեամբ քով. . .
Սրկ.-Օրհնեա տէր:

Քհ.-Տէր Աստուած օրհնեսցէ . . .

Ամէն:

Սրկ.-Մի ոք յերեսաւէց . . .

Մարմին տէրունական և արիւն փրկչական
Կայ առաջի, երկնային զօրութիւնք
յաներևոյթս
Երգեն և ասեն անհանգիստ բարբառով.
Սուրբ, սուրբ, սուրբ տէ՛ր զօրութեանց:

Սրբասացութիւնքը

Ծննդեան, Վարդավ., Աստուածածնի.

Բազմութիւնք հրեշտակաց և զօրաց երկնաւորաց
Իջեալ ի յերկնից ընդ Միածին թագաւորին.
Ո՞ր քո—
Երգէին և ասէին՝ սա է որդին Աստուածոյ,
Ամենեքեան ասասցուք՝ ուրախ լերուք երկինք
Եւ ցընծասցեն հիմունք աշխարհի,
Զի Աստուածն յաւիտենական
Ի յերկրի երևեցաւ և ընդ մարդկան շրջեցաւ,
Զի կեցուսցէ զանձինս մեր:

Զատկի եւ Խաչի.

Ով է որպէս տէր Աստուած մեր,
Խաչեցաւ վասըն մեր, թաղեցաւ
Եւ յարեաւ—
Հաւատարիմ եղև աշխարհի և համբարձաւ փառօք.
Եկա՛յք ժողովուրդք, զօրհնութիւն ընդ հրեշտակս
Երգեսցուք նըմա ասելով՝ սուրբ, սուրբ,
Սուրբ ես տէ՛ր Աստուած մեր։

Կիւրակէների եւ այլն.

Հրեշտակային կարգաւորութեամբ
Լրցեր Աստուած զքո սուրբ զեկեղեցի.
Հազարք—
Հազարաց հրեշտակապետք կան առաջի քո
Եւ բիւրք բիւրոց հրեշտակք պաշտեն զքեզ տէր
Եւ ի մարդկանէ հաճեցար ընդունել զօրհնութիւն
Զայնիւ խորհրդականաւ սուրբ, սուրբ,
Սուրբ տէ՛ր զօրութեանց։

Հայրապետաց, Մարգարէից եւ այլն.

Ամենակալ ես, տէր զօրութեանց,
Որ թագաւորդ ես յաւիտենից,
Որ նըստիս յերկնից ի յերկինս

Եւ լոյս ծագես յարարածըս քո.—
Որ խոնարհութեամբ իջեր ի յերկնից,
Քեզ պատարագըս մատուցանեմք
Եւ սուրբ զանունդ քո փառաւորեմք,
Տէր, որ պըսակիչդ ես քոյ սըրբոյ (հայրապետաց)
Վասն զի սոյա ՝ մեզ բարեխօս,
Տէ՛ր Ամենակալ, ի քում յարքայութեանդ։

Մարտիրոսաց.

Սըրբութիւն սըրբոց մեծ և ահաւոր
Եւ զինուորութիւնք հրեշտակաց
Օրհնեն զքեզ և ասեն՝
Փառք—ի բարձունս Աստուծոյ
Եւ յերկիր խաղաղութիւն։

Ննջեցելոց.

Վասն յիշատակի հանգուցելոց
Ընկալ հայր սուրբ մարդասէր
Զպատարագս, եւ՞—
Համարեա զհոգիս նոցա
Ի թիւս սըրբոց քոց յարքայութեանդ երկնից,
Մ՝անաւանդ զի հաւատով
Մ՝ատուսցուք զպատարագս,

Հաշտեսցի Աստուածութիւնդ
Եւ հանգուսցէ զհոգիս նոցա։

Սրկ.-Եւ էս խաղաղութ . . .

Տէ՛ր ողորմեա։

Սրկ.-Եւ էս հաւատով . . .

Կեցո տէր և ողորմեա։

Սրկ.-Օրհնեա տէր։
Քհ.-Շնորհք . . . խաղաղութիւն . . .

Եւ ընդ հոգւոյդ քում։

Սրկ.-Աստուծոյ երկրը . . .

Առաջի քո տէր։

Սրկ.-Ողջոյն տուք միմեանց . . .

Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ,
Որ էնն Աստուած աստ բազմեցաւ.
Խաղաղութեան ձայն հընչեցաւ,
Սուրբ ողջունի հրաման տրւաւ.
Եկեղեցիս մի անձն եղև,
Համբոյրըս յօդ լրման տրւաւ.

Թշնամութիւնըն հեռացաւ,
Սէրն յընդհանուրըս սրփռեցաւ.
Ա՛րդ, պաշտօնեա՛յք, բարձեալ ըզձայն՝
Տո՛ք օրհնութիւն ի մի բերան.
Միամնական Աստուածութեանն,
Որում սրովբէքն են սրբբաբան։

Սրկ.-Ահեւ կացցուք . . .

Առ քեզ Աստուած։

Սրկ.-Պատարագ Քրիստոս . . .

Ողորմութիւն և խաղաղութիւն
Եւ պատարագ օրհնութեան։

Սրկ.-Օրհնեա տէր։
Քհ.-Շնորհք, սէր . . . ընդ ձե՛զ . . .

Ամէն, և ընդ հոգւոյդ քում։

Սրկ.-Զդրուշս, զդրուշս . . .

Ունիմք առ քեզ տէր ամենակալ։

Սրկ.-Եւ գոհացարուք . . .

Արժան և իրաւ։

Սրկ.-Օրհնեա տէր։

Քհ.-Եւ ընդ սէրովբէ՛ն . . .

Սո՜ւրբ, սո՜ւրբ,
Սուրբ տէր զօրութեանց,
Լի են երկինք եւ երկիր փառաւք քո,
Օրհնութիւն ի բարձունս։
Օրհնեալ՝ որ եկիր
Եւ գալոցդ ես անուամբ տեառն.
Ովսաննա ի բարձունս։

Սրկ.-Օրհնեա տէր։
Քհ.-Առէք, կերէք . . .

Ա մ է ն։

Սրկ.-Օրհնեա տէր։
Քհ.-Սրբէք ի սմանէ . . .

Ամէն. Հա՛յր երկնաւոր,
Որ զորդիդ քո ետուր ի մահ
Վասն մեր պարտական պարտեաց մերոց.
Հեղմամբ արեան նորա
Աղաչեմք ըզքեզ, ողորմեա՛
Քո բանաւոր հօտի։

Սրկ.-Օրհնեա տէր։
Քհ.-Եւ զքոյս ի քոյոց . . .

Յամենայնի՝ օրհնեալ ես տէ՛ր.
Օրհնեմք ըզքեզ, գովեմք ըզքեզ.
Գոհանամք ըզքէն, աղաչեմք ըզքեզ
Տէ՛ր Աստուած մեր։

Սրկ.-Օրհնեա տէր։
Քհ.- Խաղաղութեամբ . . .

Եւ ընդ հոգւոյդ քում։

Սրկ.-Աստուծոյ երկիրք . . .

Առաջի քո տէր։ Որդի Աստուծոյ,
Որ պատարագեալ Հօր ի հաշտութիւն,
Հաց կենաց բաշխիս ի մեզ.
Հեղմամբ արեան քո սուրբ
Աղաչեմք ըզքեզ, ողորմեա՛
Արեամբ քով փրկեալ հօտի։

Սրկ.-Օրհնեա տէր։
Քհ.-Որպէս զի եղեցի . . .

Խ. Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Պ. Ս. Ռ. Ա. Публичная Библиотека
7/XI 1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
Именна, Мясникиана
1005
20315

Հոգի Աստուծոյ,
Որ զփառակցի քո զխորհուրդ՝ իջեալ
Ի յերկնից կատարեա ի ձեռս մեր.
Հեղմամբ արեան սրբա
Աղաչեմք ըղքեզ, Հանգո
Զհոգիս մեր Նընջեցելոց։

Սրկ.-Օրհնեա տէր։
Քհ.-Ընդ սրս և մեզ ...

Յիշեա տէ՛ր և ողորմեա։

Քհ.-Աստուածածնէն սրբ ...

Յիշեա տէր և ողորմեա։

Սրկ.-Առաքելոց սրբոց ...

Յիշեա տէր և ողորմեա։

Սրկ.-Օրհնեալ, դավեալ ...

Փառք յարութեան քո տէր։

{ յայտնութեան
տէրութեան
գալըստեան

Սրկ.-Առաջնորդացն և այլն։

Յիշեա տէր և ողորմեա։ (4 անգամ)

Քհ.-Զամենաբարեպաշտ ...

Ամէն ...

Սրկ.-Գոհութիւն և փառաբ ...

Ստամենայնի և յաղագս ամենեցուն։

Սրկ.-Օրհնեա տէր։
Քհ.-Եւ եղիցի ... ընդ ձե՛զ ...

Ամէն. և ընդ հոգւոյդ քում։

Սրկ.-Եւ ես խաղաղութ. և այլն։

Տէր ողորմեա։ (4 անգամ)

Սրկ.-Ընկալ կեցո ...

Կեցո տէր և ողորմեա։

Սրկ.-Զամենասրբուհի և այլն։

Յիշեա տէր և ողորմեա։
Տէր ողորմեա, քեզ տեառնըդ յանձն եղիցուք,
Տէր ողորմեա, տէր ողորմեա, տէր ողորմեա։

Սրկ.-Օրհնեա տէր։
Քհ.-Եւ տուր մեզ ...

Հայր մեր, որ յերկինս ես,
Սուրբ եղիցի անուն քո.
Եկեսցէ արքայութիւն քո,
Եղիցին կամք քո՝ որպէս յերկինս և յերկրի։

'Զհաց մեր հանապազորդ
Տո՛ւր մեզ այսօր.
Թո՛ղ մեզ ըզպարտիս մեր՝
Որպէս և մեք թողումք մերոց
պարտապանաց.
Եւ մի՝ տանիր զմեզ ի փորձութիւն,
Այլ փրկեա՛ ի չարէ։

Սրկ.-Օրհնեա տէր։
Քհ.-Զի քո է . . . Խաղաղութ . . .

Եւ ընդ հոգւոյդ քում։

Սրկ.-Աստուծոյ երկրը . . .

Առաջի քո տէր։

Սրկ.-Օրհնեա տէր։
Քհ.-Քրիստոսիւ, Յիսուսիւ . . .
Սրկ.-Պռօսխու�։
Քհ.-Ի սրբութիւն սրբոց։

Միա՛ն սուրբ,
Միա՛ն տէր.
Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր.
Ա՛մէն։

Սրկ.-Օրհնեա տէր։ (3 անգամ)
Քհ.- Օրհնեալ Հայր սուրբ և այլն։

Ա՛մէն։ (3 անգամ)

Սրկ.-Օրհնեա տէր։
Քհ.-Օրհնութիւն և փառք . . .

Ամէն. Հա՛յր սուրբ,
Որդի՛դ սուրբ,
Հոգի՛դ սուրբ.
Օրհնութիւն Հօր և Որդւոյ
Եւ սրբոյ Հոգւոյն.
Այժմ և միշտ և յաւիտեանս
Յաւիտենից։ Ա՛մէն։

Սրկ.-Օրհնեա տէր։
Քհ.-Ի սուրբ, ի սուրբ . . .

Տէր ողորմեա, տէր ողորմեա . . .
Արի Աստուած հարցըն մերոց,
Որ ապաւէնդ ես նեղելոց.
Հաս օգնութիւն ծառայից քոց,
Լեր օգնական ազգիս Հայոց։

Միջնորդութեամբ սրբոյ խաչիդ
Եւ անարատ սուրբ ծընողիդ
Յիշեա զհեղումն արեան փրկչիդ,
Ե՛լ ի խընդիր փոքու հօտիդ։

Տէր ողորմեա . . . Շնորհիւ աւուրս մեզ ողորմեա։

Սրկ.-Սուրբ անմահ . . .

Ցիշեա տէր և ողորմեա։

Սրկ.-Սաղմոս ասացէք . . .

Օրհնեալ է Աստուած։

Քրիստոս պատարագեալ

Բաշխի ի միջի մերում,—ալէլուիա։

Զմարմին իւր տայ մեզ կերակուր

Եւ սուրբ զարիւն իւր ցողէ ի մեզ,—ալէ"։

Մատիք առ տէր և առէք ըզլոյս,—ալէ"։

Ճաշակեցէք և տեսէք,

Զի քաղցր է տէր,— ալէլուիա։

Օրհնեցէ՛ք ըզտէր յերկինս,—ալէլուիա։

Օրհնեցէք ըզնա ի բարձունս,—ալէլուիա։

Օրհնեցէք ըզնա ամենայն հրեշտակք նորա,
—ալէլուիա։

Օրհնեցէք ըզնա ամենայն զօրութիւնք
նորա,—ալէլուիա։

Սրկ.-Եկեղեաց և հաւատ . . .

Աստուած մեր և տէր մեր երևեցաւ մեզ։

Օրհնեալ, եկեալ անուամբ տեառն։

Գհ.-Կեցո տէր . . .

Լըցաք ի բարութեանց քոց տէ՛ր,

Ճաշակելով ըզմարմին քո և զարիւն։

Փառք ի բարձունըս կերակրողիդ ըզմեզ։

Որ և հանապազ կերակրես ըզմեզ,

Առաքեա՛ ի մեզ ըզհոգևոր քո զօրհնութիւն։

Փառք ի բարձունըս կերակրողիդ ըզմեզ։

Սրկ.-Եւ ևս խաղաղութ . . .

Տէ՛ր ողորմեա։

Սրկ.-Եւ ևս հաւատով . . .

Գոհանամք ըզքեզ տէր,

Որ կերակրեցեր ըզմեզ

Յանմահական սեղանոյ քոյ։

Բաշխելով ըզմարմին և զարիւնդ

Ի փրկութիւն աշխարհի

Եւ կեանք անձանց մերոց։

Սրկ.-Օրհնեա տէր։
Քհ.-Որ օրհնես զայնոսիկ . . .

Օրհնեալ է Աստուած.

Քհ.-Կեցո զժողովուրդս . . . և այլն։

Ամէն։ (3 անգամ)

Ամէն. Եղիցի անուն տեառն օրհնեալ
Յայսմհետէ մինչև յաւիտեան. (2 անգամ)
Եւ եղիցի անուն տեառն օրհնեալ . . .

Քհ.-Կատարումն օրինաց . . .
Սրկ.-Օրթ։
Քհ.-Խաղաղութ . . .

Եւ ընդ հոգւոյդ քում։

Սրկ.-Երկիւղածութեամբ լուարուք։
Քհ.-Սրբոյ աւետարանի . . .

Փառք քեզ տէր Աստուած մեր։

Սրկ.-Պռօսխումիդ։

Ասէ Աստուած։





ՑԱՌԵԼՈՒԱԾ

ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ

Բ

Ի. ԾՆՆԴԵԱՆ։

Այսօր տօն է ծընընդեան—աւետիս
Տեառն մերոյ և յայտնութեան—աւետիս։
Այսօր արևն արդարութեան—աւետիս
Երևեցաւ ի մէջ մարդկան—աւետիս։
Այսօր սուրբ կոյսն անապական—աւետիս
Ծնաւ երեր զանմահ արքայն—աւետիս։
Այսօր հրեշտակք երկնից իջան—աւետիս
Ընդ մեզ օրհնեն զանմահ արքայն—աւետիս։

Զանապական կոյսըն Մարիամ
Աստուածածին խոստովանի սուրբ եկեղեցի,
Ուստի տբաւ հացն անմահութեան
Եւ բաժակ մեզ ուրախարար.
Տո՛ւք օրհնութիւն նըմա հոգեւոր երգով։

Խորհուրդ մեծ և սքանչելի,
Որ յայսմ աւուր յայտնեցաւ,
Հովիւք երգեն ընդ հրեշտակս,
Տան աւետիս աշխարհի։
Ծնաւ նոր արքայ
Ի Բեթղեհէմ քաղաքի.
Որդիք մարդկան օրհնեցէք,
Զի վասն մեր մարմնացաւ։
Անբաւելին երկնի և երկրի
Ի խանձարուրս պատեցաւ.
Ոչ մեկնելով ի Հօրէ՝
Ի սուրբ այրին բազմեցաւ։

II. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ։

Ով զարմանալի խորհուրդ այս մեծ յայտնեալ.
Արարիչն Աստուած ի Յորդանան եկեալ.
Կամէր մկրտիլ ի ծառայէն իւրմէ,
Զառնոյր Կարապետն ըզմկրտելն ի յանձն։
Յորդանան լուեալ փախըստական դառնայր,
Վըտակ առ վըտակ պատգամաւոր լինէր.
Գետ մի՛ զարհուրիր, քո արարիչն եմ ես,
Եկեալ մկրտիմ և լուանամ ըզմեղս։
Յիսուս յառաջեաց աստուածութեամբն ի ջուրն
Հանդերձ Յովհաննու Յիսուս ի գետն եմուտ.
Երկինք պատառեալ, ձայն ի յերկնից իջեալ
Ձայն Հօր ի բարձանց Որդւոյն իւր վըկայեալ։
Դա է իմ որդի ընդ որ հաճեցայ, ասէր,
Դըմա լուարուք որդիք մարդկան ձայնէր։

Այսօր ձայնըն հայրական
Յերկնից իջեալ հաճոյական
Սիրեցելոյ Որդւոյ վկայն։
Ա՛յ յորդորէ, գետ յորդորէ, գետ Յորդանան.
Յորդորական ձայնիւ երգեր
Մեծ Կարապետն Յովհաննէս։

Այսօր երկիրս երկինք եղև
Երևելով Աստուածորդւոյն
Սիրով եկեալ ի մկրտիլ։
Ա՛յ յորդորէ, գետ յորդորէ . . .
Այսօր վերին դասք հրեշտակաց
Ուրախացան ընդ սուրբ գալուստ
Աստուածորդւոյն ի Յորդանան։
Ա՛յ յորդորէ, գետ յորդորէ . . .
Այսօր եկեալ Աստուածորդին
Ի Յորդանան խոնարհութեամբ՝
Զրով մկրտիլ ի Յովհաննէ։
Ա՛յ յորդորէ, գետ յորդորէ . . .

III. ԶԱՏԿԻ։

Միաշաբաթ օր հանգըստեան—աւետիս,
Կանայք եկին ի գերեզման—աւետիս.
Եւ ողբային արտասուական—աւետիս,
Խնդրել զՅիսուս անապական—աւետիս։
Զայնեաց հրեշտակն ուրախական—աւետիս,
Զայն որ եդին ի գերեզման—աւետիս.
Ձեզ աւետիս յարեաւ փեսայն—աւետիս,
Դրունք դըժոխոց խորտակեցան—աւետիս։

Քրիստոս յարեաւ ի մեռելոց,
Մահուամբ ըզմահ կոխեաց
Եւ յարութեամբն իւրով
Մեզ ըզկեանս պարգևեաց.
Նմա փառք յաւիտեանս. ամէն։

Գովեա Երուսաղէմ ըզտէր.
Յարեաւ Քրիստոս ի մեռելոց—ալէլուիա։
Եկայք ժողովուրդք երգեցէք տեառն—ալէլուիա։
Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ
Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն.
Յարուցելոյն ի մեռելոց—ալէլուիա։
Որ զաշխարհըս լուսաւորեաց—ալէլուիա։

IV. Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ։

Որ կազմեցեր սեղան խորհրդոյ
Եւ արբուցեր յանմահական բաժակէն
Սրբոց քոց առաքելոցն
Այսօր ի սուրբ վերնատանն.
Աղաչեմք, Փրկիչ, ողորմեա։
Մաքրեա ըզմիտս և ըզխորհուրդս,
Զի և մեք հաղորդիցուք սրբութեամբ,

Սրբոց քոց առաքելոց
Այսօր ի սուրբ վերնատանն.
Աղաչեմք, Փրկիչ, ողորմեա։

Այսօր անճառ լուսոյն ծագումն,
Ի փրկութեան մեր կատարումն
Խոնարհի ի վերնատունն
Ի սուրբերական տօնից լրումն.
Նախ քան զընթրիսըն խորհրդոյ
Սփածաւ ղենջակ արկողն լուսոյ
Եւ ջուր առեալ ծառայաբար
Զոտըս լուանայր զաշակերտացն։
Բանին հօր փառաց լուսոյ՝
Պետրոս մերձիլ յոտս ոչ ներէր.
Այնըմ ձեռաց, որոյ են գործք,
Երկնից երկինք և երկրաւորք՝
Որով կուրաց աչըք բացան,
Խուլք եւ համերք արձակեցան,
Որ վերածեաց զինքն ի ծովին
Սաստեաց ալեացն և լռեցին։
Գլխոյն ընտրեալ հօտին փոքու
Սաստէր զխորհուրդն ոչ գիտելոյ,

Որով դառնայր և հնազանդէր
Զոտս և ըզգլուխս մաքրել մաղթէր.
Գլխոյս, ասէ, չէ ինչ պիտոյ
Լուացումըն ջրոյ, զի լուացեալ է,
Ոտիցըդ պէտք են մաքրութեան՝
Ցօդիլ ի գլուխըս սրբութեամբ։
Դասուց իւրոց աշակերտաց,
Զոր նախ բանիւ վարդապետեաց,
Այսօր գործով ըզծայրագոյն
Եցոյց յինքեան զխոնարհութիւն.
Սպասաւորեալ հողեղինաց՝
Այն որ անտեսն է հրեղինաց,
Տարեալ պաշտօն իւր ծառայիցն,
Այն որ պաշտին ի սրովբէից։
Եթէ տէրս, ասէ, էից
Եւ վարդապետըս բոլորից,
Զաշակերտացդ և զծառայից
Զոտըս լուացի ի հնոյ աղտից.
Միմեանց և դուք համաբնութեամբ
Ցուցէք ըզնոյն խոնարհութիւն,
Բարձրացելոյն ի կործանումն
Եւ անկելոյ բնութեանդ կանգնումն։

Զոր մաքրեցեր յաւազանին
Մաքուր ձեռօք զոտըս նոցին,
Եւ ուսուցեր խոնարհութեամբ
Յաղթող լինել չար հրպարտին.
Եւ զիմ լրւայ զտիղմըն մեղաց
Աղաչանօք սրբոյ գընդին,
Եւ ըզգընացս ուղղեա զոտին
Խոնարհութեամբ ելիւք յերկինս։

Վ. Ս. ՊՍԱԿԻ։

Ուրախ լեր սուրբ եկեղեցի,
Քանզի Քրիստոս արքայն երկնից
Այսօր պըսակեաց ըզքեզ խաչիւն իւրով
Եւ զարդարեաց զամուրըս քո
Սքանչելի փառօքն իւրովք։
Խընդա յոյժ դուստրը սիովնի,
Քանզի երկիրս երկինք եղև
Այսօր վերըստին քո նորոգմամբ
Եւ Թագաւորն երկնաւոր
Հաճեցաւ բընակել ի քեզ։

Ընդ դասս երկնաւոր զօրացն
Վեր առեալ տօնեմք քեզ
Այսօր զանդադար փառատրութիւնս.
Ուրախ լեր հարսն անարատ
Անքընին քո խորհրդով։

Ո՛վ երանելիդ ամենեցուն,
Տիեզերական իշխանութեամբ
Ընկալար ի Քրիստոսէ
Ըզթագ պարծանաց.
Ո՛վ (Թէոդոս) մեծ թագաւոր,
Վասըն մեր բարեխօսեա
Առ թագաւորն երկնաւոր։
Որ քոյին սուրբ աղօթիւքդ
Վանեցեր ըզթշնամին,
Կոխելով ըզսատանայ՝
Ընդ երկնայինսըն դասեցար.
Ո՛վ (Թէոդոս) մեծ թագաւոր,
Վասըն մեր . . .
Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ
Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից.
ամէն։

Ուստի և մեք հաւատացեալքս
Տօնեմք ըզքո յիշատակս,
Օրհնութիւն առաքելով
Ըզքեզ պըսակողին.
Ո՛վ (Թէոդոս) մեծ թագաւոր,
Վասըն մեր . . .

Սիօնի որդիք զարթիք,
Հարսին լուսոյ տո՛ւք աւետիք.
Եթէ փեսայն քո յարուցեալ
Յաղթեաց մահու իշխանութեամբ
Գայ պըսակէ ըզքեզ փառօք,
Ե՛լ ընդ առաջ պըճնեալ զարդուք.
Երգեա՛ երգ նոր յարուցելոյն՝
Նընջեցելոց կենաց պըտղոյն։

VI. ՆՆՋԵՑԵԱԼԻ ՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԵԱՆ։

Ամ՛ենարհ ամենայն Գող եղէ մեղաց,
Առ ի նայեցեալ Գըտող կորըստեան,
Ամ՛ենակից լերուք։ Գուք ինձ փորեցի։
Բանամ ըզշըրթունս, Դաւեցի զանձն իմ,
Բարբառիմ լեզուաւս, Դաւաճանեցի,
Բողոքեմ զանձնէս։ Դարան գործեցի։
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա։ *)
Երբեմն էի լոյս Երկինք և երկիր
Եւ այժմ եմ խաւար Եկայք ողբացէ՛ք
Եւ ըստուեր մահու։ Եղկելի զանձն իմ։
Զի՞արդ պատմեցից Ընտրեցի ըզչարն,
Զթիւ մեղաց իմոց, Ընկալայ կամաւ
Զի բազում են յոյժ։ Ըզհոյլըս մեղաց։
Տէր ողորմ. . . .
Թաթաւիմ տըղմով, Ի բաց մեկնեցայ
Թաւալիմ ի մեղս, Ի սուրբ խորհըրդոց
Թօթափիլ չկարեմ։ Ի բարեաց գործոց։
Ժանտախտիւ լըցեալ, Լաւ վարկաւ անձն իմ,
Ժահահոտ եղէ Լուսոյն հեռանալ
Ժամանակս բազումս։ Լինիլ ընդ խաւար։
Տէր ողորմ. . . .

*) Իւրաքանչիւր 2 տան վերջը կրկնել։

Խորհուրդքք չարին Կամաւ կորացայ,
Խաբեն ըզհոգիս, Կարկամեալ անձամբս
Խորասոյզ առնեն։ Կանգնիլ ոչ կարեմ։
Ծածկեն անդընդօք, Հուր մեղաց կիզող
Ծիծաղին գլորմամբս, Հրդեհեաց որ յիս
Ծանակ զիս առնեն։ Հոգևոր բարիս։
Տէր ողորմ. . . .

Ձաղկեցայ մեղօք, Ճաշակմամբ մեղաց
Ձաղկեցին տեսողք, Ճաշեցի ըզմահ
Ձանձրացաւ հոգիս։ Ծոխս աղքատացայ։
Ղեղի դառնութեան Մեռեալ եմ հոգւովս,
Ղօղեալ ի սիրտ իմ՝ Մոլորեալ մըտօքս,
Ղամպար իմ զիջաւ։ Միայն կամ մարմնովս։
Տէր ողորմ. . . .

Ցորոգայթ մահու Շուրջ պատեալ զինև
Ցորսողին անկայ, Շունք բազումք եղեն՝
Ցաղթեցայ յախտից։ Շաղախին արեամբս։
Նետից թըշնամւոյն Որս եղէ չարին,
Նըշաւակ եղէ, Ուռկանաւ մեղաց
Նոր միշտ խոցոտիմ։ Որսացաւ զանձն իմ։
Տէր ողորմ. . . .

Ձարաչար վըշտօք Ձանամ զըղջանալ
Ձարչարի անձն իմ Ձեռանիմ դարձեալ,
Ձունիմ դադարումն։ Ձեռնում հրով մեղաց։
Պարտապան գըտայ Ռաբբի կոչեցայ,
Պարտուց յանցանաց Ռակայ անուանիմ
Պարտեալս ի մեղաց։ Ռամկական վարուքս։
Տէր ողորմ. . . .

Սիրով ցանկութեան Տիրեցին ինձ չարք,
Սաստիկ բարկութեամբ Տարագիր հանին
Սիրտ իմ խոցեալ է։ Տիրական գըրկացն։
Վիրօք յանցանաց Բաբունեալոյն բարւոյ
Վըշտանալ հոգիս, Բախճական ձայնին
Վարանեալ շըրջիմ։ Ոտինս ոչ լուայ։
Տէր ողորմ. . . .

Ցանկութիւն չարեաց Փութացէր, անձն իմ,
Ցանկալի դիմօք Փախչիլ ի չարեաց
Ցաւեցոյց զաչս իմ։ Փափագիլ բարեաց։
Իւրաքանչիւրոց Քեզ միշտ մերձ ծանիր,
Իւսմամբ խուռն ախտից Քուն մահու եկեալ
Իւծեալ է հոգիս։ Քընող դատաւոր։
Տէր ողորմ. . . .

Փայլին արդարքն յարքայութեան
Եւ ճրգնաւորքն ի հանգըստեանն,
Մարտիրոսքըն պըսակին
Եւ կուսանաց լապտերք վառին.
Դասեցո՛, Տէր, ընդ նոսին,
Որք զքեզ Աստուած խոստովանին,
Արդարութեամբ մի՛ դատեսցին,
Այլ գըթութեամբ քո քաւեսցին։
Քո անպատում խոնարհութեամբդ,
Որ թաղեցար մեռելութեամբդ
Եւ յարուցեր որդւոց մարդկան,
Որք հաւատով ի քեզ անկան,
Ցարո՛ և զմեզ արդարութեամբ
Եւ զնընչեցեալսն ողորմութեամբ,
Զի կենդանեացըս բերանով
Տացին քեզ փառս ընդ Հօր Հոգւով։

Փառաց ի փառըս բարձրանան,
Աջակողմեանքըն վերանան,
Յորժամ լըսեն զերանական
Ձայն օրհնութեան ի քէն կոչման,

Նընչեցելոյս մեր լըսեցո՛
Զաստուածային բարբառդ քո,
Դասաւորեա՛ ըզսա վերնոցն
Երգել քեզ զփառս ընդ զուարթնոցն։
Քահանայք և ժողովուրդք
Հայցեմք ի քէն Տէ՛ր բարեգութ՝
Ընդ նընչեցեալսըն հաւատով
Ընկալ ըզմեզ նովին յուսով՝
Յերուսաղէմ քաղաք վերին,
Յորում արդարքըն ժողովին,
Փառս վերերգել միշտ ընդ նոսին
Երրորդութեանդ երրեակ անձին։

Ի վերինն Երուսաղէմ
Ի բնակարանըս հրեշտակայ,
Ուր Ենովք և Եղիաս
Կան ծերացեալ աղաւնակերպ
Ի դրախտին Եդեմական
Պայծառացեալ արժանապէս.
Ողորմած Տէր, ողորմեա՛
Հոգւոցըն մեր նընչեցելոց։

VII. ԱՌԱՋՆՈՐԴԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ:

Հրաշափառ Աստուած և միշտ բարեխնամող,
Որ յառաջ գիտութեամբ ըզփրկութիւն Հայաստանեայց
Ըսկիզբնաւորեալ ի պարթևական մեղապարտ ազգէն
Լուսաւորիչ մեզ շնորհեցեր։
Վասն որոյ բարեխօսութեամբ սորա կեցո՛ ըզմեզ
Այժմ և ի քո ահաւոր գալըստեանն։

Հրաշալի զարմացմամբ երանելի սուրբ Գրիգոր
Զանտանելի ըզչարչարանս ի յանձն էառ
Եւ երեքհընգօք ամօք ի մէջ թունաւորացն բնակեր
Անդընդային տանջանօքն ի վիրապին։
Վասն որոյ բարեխ. . . .

Հրաշագործ քո բանիւդ և մեծ ողորմութեամբդ
Եկեալ բբժըշկեր ըզհարուածեալսն
Ի դիւաբաղխ սաստիցն՝ երկրպագուս առնելով
Զամենեսեան սուրբ Երրորդութեանդ։
Վասն որոյ բարեխ. . . .

Ուրախ լեր սուրբ եկեղեցի Հայոյն (սե. երե. 32)

VIII. ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔԻ:

Աստուած հրզօր Հայր գըթութեան
Աղբիւր առատ ողորմութեան
Պատճառ Որդւոյն անեղ ծնընդեան
Եւ սուրբ Հոգւոյն անհաս բըղխման՝
Ընդ որս մի տէր ի մի հրաման
Հաստիչ բոլոր եղելութեան,
Որով յաւէտ փառաբանի
Երրորդութիւնդ անճառելի։
Որդիդ Աստուած տէր և իշխան
Նըկարագիր Հօր էութեան
Որ ըզպատկեր քո տիրական
Տեսեալ ի վիհըս կորըստեան
Զըհանդուրժեալ սէրդ անսահման
Մերժէր ըզնա ի յաւիտեան,
Ուստի և մեք փառաւորեմք
Ըզսէր անունդ անճառելի։
Ելեր ի փայտըն մահաբեր,
Ցոր զփրկական արիւնդ հեղեր,
Որով ըզմեզ ազատեցեր
Ի գերողէն և կեցուցեր,

Ի գերեզման մահու իջեր
Եւ զմահացեալսըն լարուցեր,
Ընդ որս և մեք փառաւորեմք
Զտնօրէնութիւնդ անճառելի։

Հոգիդ Աստուած, աղբիւր շնորհաց
Առատաբաշխ և միշտ գթութեան
Եւ յաւիտեան։
Ըզմայրըս մեր պայծառացո՛,
Զմանկունս սոյին քև զօրացո՛,
Ըզհայրապետըս մեր կեցո՛,
Եւ ի շնորհըս քո փայլեցո՛,
Ի փառս սուրբ Երրորդութեան
Այժմ և յաւէտ և յաւիտեան։

IX. ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔԻ։

Ամենազօր Աստուա՛ծ
Եւ թագաւոր յաւիտենից,
Որ ի պատկեր քո երկնաւոր
Եւ աներևոյթ թագաւորութեանդ
Հաստատեցեր յերկրի թագաւոր
(Զնիկոլայ Աղէքսանդրովիչն)
Ի կառավարել և ի պահպանել
Ըզքո ժողովուրդդ,
Պահեա՛ ըզսա անսասան
Եւ անպարտելի։
Աղբիւր կենաց և պարգևիչ խաղաղութեան
Եւ զօրացուցիչ քոյոց ծառայից
Յաւել ըզկեանս խաղաղականս
Ի քէն պսակելոյ արքայիս մերոյ
(Նիկոլայ Աղէքսանդրովիչի)
Եւ զօրացո՛ ի թշնամեաց պատերազմի
Ի փառս անուանդ
Եւ ի պայծառութիւն եկեղեցւոյ քում սրբոյ,
Յորում փառաւորի անդադար
Տէրութիւնըդ քո։

Բարձրացո՛, Տէր, և փայլեցո՛
Գաւազան իշխանութեան սորա
Ընդ ամենայն ծագս երկրի.
Ընդարձակեա՛ շառաւիղս
Եւ հարազատ ժառանգակցս
Մինչև ի կատարած աշխարհի.
Այլև օրհնեա՛ և պահպանեա՛ զամենեսեան,
Որք ընդ իշխանութեամբ սորին ենթադրին,
Ցորոց փառաւորի անդադար
Տէրութիւնդ քո։
Թագաւոր երկնաւոր,
Զեկեղեցի քո անշարժ պահեա՛,
Եւ զերկրպագուս անուանդ քում
Պահեա՛ ի խաղաղութեան։

X. ԳԻՇԵՐԱՑԻՆ ԺԱՄՈՒ։

Առաւօտ լուսոյ
Այրեգակն արդար,
Առ իս լոյս ծագեա՛։

Գանձդ ողորմութեան,
Գանձիդ ծածկելոյ,
Գրտող զիս արա։

Երրեակ միութիւն,
Եղելոց խնամող
Եւ ինձ ողորմեա։

Էդ Հայր անըսկիզբն,
Էակից Որդի,
Է միշտ սուրբ Հոգի։

Թագաւոր փառաց,
Թողութեանց տուողդ,
Թո՛ղ ինձ ըզյանցանս։

Ի քէն, Տէր, հայցեմ։
Ի մարդասիրէդ՝
Ինձ բըժըշկութիւն։

Բըղխումն ի Հօրէ,
Բըղխեա՛ ի հոգւոյս
Բանք քեզ ի հաճոյս։

Դուռն ողորմութեան
Դաւանողիս բաց,
Դասեցո՛ վերնոցն։

Զարթիր, Տէր, օգնել
Զարթո՛ ըզթըմրեալս՝
Զուարթնոց նըմանիլ։

Ընկա՛լ զիս գըթած,
Ընկա՛լ ողորմած,
Ընկա՛լ մարդասէր։

Ժողովող բարեաց,
Ժողովեա՛ և զիս
Ժողովս անդրանկաց։

Լիր կեանք մեռելոյս,
Լոյս՝ խաւարելոյս,
Լուծանող՝ ցաւոյս։

Խորհրդոց գիտող,
Խաւարիս շնորհեա՛
Խորհուրդ լուսաւոր։

Կենարար Փրկիչ,
Կեցո՛ ըզմեռեալս,
Կանգնեա՛ ըզգլորեալս։

Զայնիւս աղաչեմ,
Զեռօքս պաղատիմ,
Զիր բարեաց շնորհեա՛։

Ծառագայթ փառաց,
Ծանապարհ ինձ ցոյց՝
Ծեպել ի յերկինս։

Յորժամ գաս փառօք
Յահագին աւուրն,
Յիշեա՛ զիս, Քրիստո՛ս։

Շնորհատու բարեաց,
Շնորհեա՛ զքաւութիւն,
Շնորհեա՛ զթողութիւն։

Ծընունդ Հօր ծոցոյ,
Ծածկելոյս ստուերաւ
Ծագեա՛ զլոյս փառաց։

Հաստեա՛ հաւատով,
Հաստատեա՛ յուսով,
Հիմնեցո՛ սիրով։

Ղամպարամբ լուսոյ,
Ղեկավար ճաշտար,
Ղօղեալս ամրացո՛։

Միածինըդ Հօր,
Մոյծ զիս յառագաստ
Մաքուր հարսանեացդ։

Նորոգող հնութեանց,
Նորոգեա՛ և զիս,
Նորոգ զարդարեա՛։

Ուրախացո՛, Տէր,
Ոգւոյս փրկութեամբ,
Ոյր վասն եմ ի սուգ։

Զար մըշակողին,
Զար սերմանց նորին
Զորացո՛ զպտուղն։

Զուր շնորհեա՛ աչացս
Զերմ հեղուլ արտօսր
Զընջել ըզյանցանս։

Սէր անուն Յիսուս,
Սիրով քով ճրմլեա՛
Սիրտ իմ քարեղէն։

Տենչալոյդ տեսլեամբ
Տո՛ւր ինձ յագենալ
Տէ՛ր Յիսուս Քրիստոս։

Ցօղ արեան քո, Տէր,
Ցօղեա՛ ի հոգիս,
Ցընծասցէ անձն իմ։

Փրկիչ բոլորից,
Փութա՛ զիս փրկել
Փորձութեանց մեղաց։

Պարգևիչ բարեաց,
Պարգևեա՛ իմոց
Պարտեացս թողութիւն։

Ռետինըդ քաղցու,
Ռամ հոգւոյս արբո՛,
Ռահ ցո՛յց ինձ լուսոյ։

Վասըն գըթութեանդ,
Վասն ողորմութեանդ՝
Վերըստին կեցո՛։

Բաբունդ երկնաւոր,
Բոտեա՛ զաշակերտս
Բամից երկնայնոց։

Իլիծեալըս մեղօք
Իլիծեալ աղաչեմ
Իլսել ինձ բարիս։

Քաւիչ յանցանաց,
Քաւեա՛ զօրհնաբանս,
Քեզ երգել ըզփառս։

Սրբուհւոյ Աստուածածնին բարեխօսութեամբն՝
Յիշեա՛ Տէր և ողորմեա։

ՀԱՅԿ ՀԱՅՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Армянская Библиотека
С.С.Р.А.
7/XI 1922
Армения, Мясникян
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Ստանալու համար պէտք է դիմել.

Армавиръ (Кубан. области), Регенту Шаанянцъ Симеону.

Տպագրութեան համար պատրաստ են.

1) Ուղղեցոյց խմբապետներին և ուսուցիչներին, (տարբական ձայնագրութեան վեց դաս)

2) Ձեռնարկ եւրոպական ձայնագրութեան։

ԳԻՆՆ Է 15 ԿՈՊ.

10-ից աւելի առնողը ճանապարհածախս չի վճարիլ։
50-ով առնողին 20% զիջում։

002 7432

<< Ազգային գրադարան
NL0027432

2616